ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Սիրելի՛ հարազատներ,

Ուրախ ենք յայտնելու, որ ձեր մասնակցութեան եւ գործակցութեան շնորհիւ, ունեցանք շատ յաջող տօնավաճառ մը:

Մեր յաջորդ կարեւորագոյն ձեռնարկը եկեղեցւոյս 62-րդ տարեդարձի տօնակատարութիւնն է, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 8 Նոյեմբեր 2026-ին, *Marriott Downtown* (7707 *Woodmont Ave*, *Bethesda*, *MD*) պանդոկին մէջ ժամը 2:00-էն սկսեալ:: Իսկ առաւօտեան ժամը 10:30-ին, Ս. եւ անմահ պատարագ պիտի մատուցանէ եւ քարոզէ Գերաշնորհ Տէր Անուշաւան Սրբազան Արեւպիսկոպոս Դանիէլեան: Կը հրաւիրենք ձեզ բոլորդ՝ մասնակցելու եպիսկոպոսական պատարագի հոգեպարար արարողութեան եւ եկեղեցւոյ տարեդարձի տօնախմբութեան:

Կը խնդրենք, որ հրաւէրները ստանալէ անմիջապէս ետք, ապահովէք ձեր տեղերը՝ հեռաձայնելով եկեղեցւոյ գրասենեակ՝ (301) 229- 8742:

Անհամբեր ենք ձեր ներկայութիւնը վայելելու: Շնորհակալութիւն նաեւ ձեր վստահութեան ու շարունակական աջակցութեան համար:

Տէր Հայր եւ Հոգաբարձութիւն

Dear Parishioners,

We were very excited and encouraged to have seen you all at our very successful bazaar which took place this past month.

Our next major upcoming event is the celebration of our church's 62nd Anniversary on November 8, 2026. Our celebration will start with our church service in the morning at 10:30am. His Eminence Archbishop Anoushavan Tanielian, Prelate, will celebrate the divine liturgy and deliver the sermon. After the church service, our Anniversary banquet will take place starting at 2:00pm - *Marriott Downtown* (7707 *Woodmont Ave*, *Bethesda*, *MD*)

We encourage all community members to join Der Hayr and The Board of Trustees to attend the special Sunday service and celebrate our Anniversary.

Please keep an eye out for our official invitation coming to you soon or call the church office (301) 229 – 8742, to make your reservations in advance.

Thank you for your continued support!

Ս. ԽԱՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
SOORP KHATCH ARMENIAN APOSTOLIC CHURCH

SUNDAY, OCTOBER 18, 2026



ՁԱՅՆ ԳՁ

ԽԱՉՎԵՐԱՑԷՆ ԵՏՔ Ե. ԿԻՐԱԿԻ

FIFTH SUNDAY AFTER THE EXALTATION

ՀԱՄԱՍՏԵՂ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ
ՅԱՏՈՒԿ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ 9:30-ԻՆ
SPECIAL SERVICE FOR
HAMASDEGH ARMENIAN SCHOOL 9:30 *a.m.*

Ս. Պատարագ Աւր. ժամը 10:30-ին հեռարձակում

Divine Liturgy 10:30 a.m. Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church
4906 Flint Drive, Bethesda, MD 20816
Office Hours: 10:00 a.m-2:00 p.m.
Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393
E-mail: soorpkhatch@verizon.net
Web Page: www.soorpkhatch.org
Archpriest Fr. Sarkis Aktavoukian, Pastor
Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

For All Sick *Parishioners*

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԸՆ

- - - - - - (4 . 3 - 18) - - - - - -

Նոյնն է մեր ալ պարագան: Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ ղրկեց իր Որդին, որ կնոջմէ մը ծնաւ եւ Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ Օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ ղրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Աբբա», այսինքն «Հայր» կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէք, այլ՝ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

Ճիշդ է որ նախապէս երբ զԱստուած չէիք ճանչնար, չաստուածներու կը ծառայէիք: Բայց հիմա որ զԱստուած ճանչցաք եւ մանաւանդ Աստուած ալ ձեզ ճանչցաւ, ի՞նչպէս կրկին կը վերադառնաք բնութեան տկար ու խեղճ ոյժերու պաշտամունքին եւ վերստին կ'ուզէք անոնց ծառայել. յատուկ կարեւորութիւն կու տաք որոշ օրերու եւ ամիսներու, որոշ ժամանակներու կամ տարիներու: Կը վախնամ որ ձեզի համար տարած ամբողջ աշխատանքս զուր անցած ըլլայ:

Կը խնդրեմ, եղբայրնե՛ր, ինծի պէս եղէք, քանի ես ալ ժամանակ մը ձեզի պէս էի:

Ձեզի դէմ բնաւ գանգատ մը չունիմ: Ընդհակառակը. հարկաւ գիտէք թէ սկիզբը, երբ Աւետարանը ձեզի քարոզելու եկայ, տկար էի մարմնով. եւ հակառակ անոր որ ինծմէ վիճակովս փորձանք եղայ ձեզի, չանարգեցիք զիս, ո՛չ ալ արհամարհեցիք. այլ զիս ընդունեցիք այնպէս՝ ինչպէս Աստուծոյ հրեշտակը կամ Քրիստոս Յիսուսը պիտի ընդունէիք. եւ ուրախութեամբ լրիւ ատիկա: Հիմա ի՞նչ պատահեցաւ: Կրնամ վկայել ձեզի համար, որ եթէ կարելի ըլլար՝ ձեր աչքերը կը հանէիք եւ կու տայիք ինծի: Միթէ ճշմարիտը խօսած ըլլալուս համար թշնամի՞ եղայ ձեզի: Մի՛ կարծէք թէ ձեզի հանդէպ մասնաւոր հետաքրքրութիւն ցուցաբերող այդ մարդիկը ձեր բարիքը կը խորհին: Ո՛չ: Անոնք կ'ուզեն ձեզ ինձմէ բաժնել, որպէսզի ամբողջութեամբ իրենց հետեւիք: Բայց երանի տե՛ւաբար բարիին նախանձախնդիր ըլլայիք, եւ ո՛չ միայն երբ որ ես ձեր մէջ ներկայ եմ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆՉԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

- - - - - - (4 . 14 — 23) - - - - - -

Յիսուս Գալիլեա վերադարձաւ Սուրբ Հոգիին զօրութեամբ, եւ ամբողջ գաւառին մէջ իր համբաւը տարածուեցաւ: Անոնց ժողովարաններուն մէջ կ'ուսուցանէր՝ արժանանալով բոլորին հիացումին ու գովասանքին:

Եկաւ Նազարէթ քաղաքը, ուր մեծցած էր, եւ իր սովորութեան համաձայն Շաբաթ օր ժողովարան գնաց: Երբ ոտքի ելաւ կարդալու համար օրուան ընթերցուածը, իրեն տուին Եսայի մարգարէին գիրքը: Բացաւ եւ գտաւ այն տեղը ուր կ'ըսէր.-

«Տիրոջ Հոգին վրաս է.
որովհետեւ զիս օծեց եւ ղրկեց՝
աղքատներուն փրկութեան աւետիս տալու,
սրտաբեկները մխիթարելու,
գերիներուն ազատութիւն բերելու,
կոյրերուն աչքերը բանալու,
հարստահարուածները ազատելու
եւ յայտարարելու՝ թէ ահա հասած է ժամանակը,
երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը»:

Ապա գոցեց գիրքը, տուաւ պաշտօնեային եւ նստաւ: Ժողովարանին մէջ գտնուողներուն բոլորին աչքերը իրեն սեւեռած էին, երբ ըսաւ.

– Այս մարգարէութիւնը որ դուք լսեցիք, ահա այսօր իրականացաւ:

Ամէնքն ալ տպաւորուած էին իրմէ եւ հիանալով անոր շնորհալի խօսքերուն վրայ՝ կ'ըսէին.

– Այս մարդը Յովսէփի որդին չէ՞:

Յիսուս ըսաւ.

– Անկասկած ինծի պիտի ըսէք հետեւեալ առածը. «Բժի՛շկ, դուն քեզ բժշկէ»: Եւ ինչ որ լսեցիք որ գործեր ես Կափառնաումի մէջ, այստեղ՝ ու հայրենի գաւառիդ մէջ ալ կատարէ:

🕮 SCRIPTURE READINGS 🕮

GALATIANS 4:3-18

So with us; while we were minors, we were enslaved to the elemental spirits of the world. But when the fullness of time had come, God sent his Son, born of a woman, born under the law, in order to redeem those who were under the law, so that we might receive adoption as children. And because you are children, God has sent the Spirit of his Son into our hearts, crying, "Abba! Father!" So you are no longer a slave but a child, and if a child then also an heir, through God.

Formerly, when you did not know God, you were enslaved to beings that by nature are not gods. Now, however, that you have come to know God, how can you turn back again to the weak and beggarly elemental spirits? How can you want to be enslaved to them again? You are observing special days, and months, and seasons, and years. I am afraid that my work for you may have been wasted.

Friends, I beg you, become as I am, for I also have become as you are. You have done me no wrong. You know that it was because of a physical infirmity that I first announced the gospel to you; though my condition put you to the test, you did not scorn or despise me, but welcomed me as an angel of God, as Christ Jesus. What has become of the goodwill you felt? For I testify that, had it been possible, you would have torn out your eyes and given them to me. Have I now become your enemy by telling you the truth? They make much of you, but for no good purpose; they want to exclude you, so that you may make much of them. It is good to be made much of for a good purpose at all times, and not only when I am present with you.

2026 FEASTS

October 10	Holy Translators
October 25	Discovery of the Cross
October 31	Feast of All Saints
November 7	Holy Archangels Gabriel & Michael
November 28	Saint Thaddeus and Saint Bartholomew
December 12	Saint Hagop (James) of Nisibis
December 24	Saints David the Prophet & Holy Apostle James
December 26	Saint Stephen the Protomartyr
December 28	Saints Peter and Saint Paul
December 29	The Holy Apostle James & John the Evangelist

🕮 SCRIPTURE READINGS 🕮

LUKE 4:14-23

Then Jesus filled with the power of the Spirit, returned to Galilee, and a report about him spread through all the surrounding country. He began to teach in their synagogues and was praised by everyone. When he came to Nazareth, where he had been brought up, he went to the synagogue on the Sabbath day, as was his custom. He stood up to read, and the scroll of the prophet Isaiah was given to him. He unrolled the scroll and found the place where it was written: "The Spirit of the Lord is upon me, because he has anointed me to bring good news to the poor. He has sent me to proclaim release to the captives and recovery of sight to the blind, to let the oppressed go free, to proclaim the year of the Lord's favor."

And he rolled up the scroll, gave it back to the attendant, and sat down. The eyes of all in the synagogue were fixed on him. Then he began to say to them, "Today this scripture has been fulfilled in your hearing." All spoke well of him and were amazed at the gracious words that came from his mouth. They said, "Is not this Joseph's son?" He said to them, "Doubtless you will quote to me this proverb, 'Doctor, cure yourself!' And you will say, 'Do here also in your hometown the things that we have heard you did at Capernaum.'"

2025 & 2026 Membership Dues - Parishioners who have not paid their 2025 Annual Membership dues are encouraged to remit payment. 2026 Membership Dues are also accepted now. The membership fees are $150.00 per adult and $50.00 for each full time student ages 18-26. These dues are 100 percent tax deductible.

On the occasion of the Armenian Cultural Month October, Der Hayr and Board of Trustees congratulate all the teachers of the Hamasdegh Armenian School, and wish them good health, happiness and a long and prosperous life.

✞ ✞ ✞ HOKEHANKISD ✞ ✞ ✞

ZVART MOURADIAN JAMBAZIAN (40th Day)
Requested by: Der Hayr and Board of Trustees
Apkarian and Kalachian Families

JACQUELINE TERZIAN (40th Day)
HOVHANNES TERZIAN (32nd Anniversary)
ARPINE GUIRAGOSSIAN (8th Anniversary)
GARABED GUIRAGOSSIAN (45th Anniversary)
SARKIS GUIRAGOSSIAN (11th Anniversary)
Requested by: Der Hayr and Board of Trustees
Meghri & Hrag Sarkissian and Family
Choghig Terzian Guiragossian
Aram Guiragossian
Antranig & Sonia Sarkissian

ARSEN SAYAN (8th Anniversary)
EDDY SAYAN
HAYGAZ & MANOUCHAG PILIKIAN
KOHAR THEMEJIAN
Requested by: Der Hayr and Board of Trustees
Catherine Sayan

EMMI HAGOP ARABIAN
ASSADOUR , HNAZANT & MANUG ARABIAN
ADAM, VARTANOUSH AND MARY ARABIAN
ASSADOUR, SATENIG AND HRIPSIME ARABIAN
ARABIAN DECEASED FAMILY MEMBERS
Requested by: Der Hayr and Board of Trustees
Hinazant Arabian and Family

****** Altar flowers are donated by Catherine Sayan in memory of her husband, Arsen Sayan.***

ANGELS

An angel appoints a deputy, messenger, forerunner, or heavenly ambassador. The Bible testifies that angels were created on the first day along with light.

Being inhabitants of the transcendental area, the angels are free from the influence of time and have no sexual characteristics. They represent God's heavenly armies, led by Gabriel, Michael, Raphael, Haniel, Uriel, Adonel, Remiel, Raguel, Jeremiah, Chamuel, and other leading archangels.

In the Old Testament, they act as God's representatives, mediators between the spiritual and material worlds. and this circumstance finds its new manifestation in the person of Jesus Christ. As such, they are already present in the Old Testament as the "angel of the Lord" or "the angel of God."

According to the archeology of the Armenian Church, Angels are "incorporeal beings, knowledgeable, sovereign, everlasting, immortal and serving God."

The angels in heaven constantly glorify God. However, some of them, abusing their reserved sovereignty, rebelled against God and became an evil angel or Satan, a demon. (Peter 2: 2-4).

Հ Ր Ե Շ Տ Ա Կ Ն Ե Ր

Հրեշտակ կը նշանակէ պատգամաւոր, սուրհանդակ, նախակարապետ կամ երկնային դեսպան։ Աստուածաշունչը կը վկայէ, որ հրեշտակները ստեղծուած են առաջին օրը՝ լոյսին հետ միասին։

Ըլլալով անդրանցական տարածքի բնակիչներ, հրեշտակները զերծ են ժամանակի ներգործութենէն եւ չունին սեռական յատկանիշ։ Անոնք կը ներկայացնեն Աստուծոյ երկնային զօրքերը, որոնք ունին իրենց զօրագլուխ-ղեկավարները՝ Գաբրիէլ, Միքայէլ, Ռաֆայէլ, Անայէլ, Ուրիէլ, Ադոնիէլ, Փանուէլ, Բարաքիէլ, Երեմիէլ, Սաղաթիէլ եւ այլ առաջնորդ հրեշտակապետներ։

Հին Կտակարանին մէջ, անոնք հանդէս կու գան որպէս Աստուծոյ ներկայացուցիչներ, միջնորդներ՝ հոգեւոր եւ նիւթական աշխարհներու միջեւ. եւ այս հանգամանքը իր նորոգակ դրսեւորումը կը գտնէ Յիսուս Քրիստոսի անձին մէջ։ Իրրեւ այդպիսին անոնք ներկայ են արդէն Հին Կտակարանին մէջ՝ իրրեւ «Տիրոջ հրեշտակ» կամ «Աստուծոյ հրեշտակ» անունով։

Համաձայն Հայ Եկեղեցւոյ հրեշտակաբանութեան, Հրեշտակները «անմարմին գոյացութիւններ են, իմացական, անճնիչխան, մշտաշարժ, անմահ եւ սպասաւոր Աստուծոյ»։

Հրեշտակները, երկինքի մէջ անընդհատ կը փառաբանեն զԱստուած։ Սակայն անոնց մէկ մասը չարաչահելով իրեն վերապահուած ինքնիչխանութիւնը, ապստամբեցաւ Աստուծոյ դէմ եւ դարձաւ չար հրեշտակ կամ սատանայ, ըստ։ «... Աստուած մեղանչած հրեշտակներուն իսկ չխնայեց, այլ՝ զանոնք տարտարոս նետել տուաւ, ուր խաւարին կապանքներով կապուած՝ կը պահուին մինչեւ դատաստանի օրը» (Բ Պետրոս 2.2-4)։